

ԵՐԵՎԱՆԻ
«ԵՐԵՎԱԿ» ԿՐԹԱՅԱՄԱԼԻՐ
2024-2025
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ
ՆԵՐՔԻՆ ԳՆԱՅԱՏՈՒՄ

ք. Երևան
2025թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մաս 1. Ընդհանուր տեղեկություններ հաստատության մասին

Հաստատության անվանումը, համարը՝	«Երևակ» կրթահամալիր
Հաստատության հասցեն՝	Անդրանիկի 4
Հաստատության հեռախոսահամարը՝	(098) 50-25-25
Հաստատության Էլեկտրոնային հասցեն՝	info@yerevakkrt.am
Հաստատության ինտերնետային կայքի հասցեն է՝	www.yerevakkrt.am

Կրթահամալիրն ունի ուսումնադաստիարակչական գործունեության իր ռազմավարությունը:

«Այսօրվա հիմնավոր կրթությունը վաղվա բարեկեցությունն է»:

«Երևակ» կրթահամալիրի նպատակն է երեխայի համակողմանի և ներդաշնակ զարգացման համար ստեղծել նպաստավոր ու անհրաժեշտ պայմաններ և դաստիարակել բազմակողմանի զարգացած, բարոյական բարձր հատկանիշներով օժտված անհատներ, ապահովել այնպիսի կրթություն, որը հնարավորություն կտա մեր քաղաքացուն լինել ազատ և առողջ: Կրթահամալիրը մի ջերմ և հյուրընկալ մոլորակ է, որտեղ յուրաքանչյուր աշակերտ կարողանում է լիարժեք դրսևորվել և զարգացնել իր կարողությունները:

Կրթահամալիրի խորհրդանշանը.



Յ/հ	Ուսումնասիրության ոլորտ	Գնահատման արդյունք		Աշխատանքի նկարագիր
		թիվ	%	
1	2	3	4	5
1	Սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձեռք բերմանը, արժեքային համակարգի ձևավորմանը, սովորողների զարգացմանն ուղղված գործողությունների առաջնայնությունը, ուսումնական հաստատության տարեկան աշխատանքային ծրագրում դրանց արտացոլումը, իրականացման արդյունավետությունը.			1.2024-2025 ուսումնական տարում դպրոցում ուսումնական գործընթացը կազմակերպվել է նոր չափորոշիչների հիման վրա՝ համահունչ հաստատված ուսումնական պլանին և կրթական ռազմավարությանը: Դասերը մեկնարկել են 2024 թվականի սեպտեմբերի 2-ին՝ առկա ուսուցման ձևաչափով: Տարվա սկզբին ուսուցիչները լիարժեք ապահովվել են առարկայական ծրագրերով, հաստատվել են թեմատիկ պլանները, տրամադրվել են ուսումնաօժանդակ նյութեր: Աշակերտները մինչև սեպտեմբերի 1-ը համարվել են անհրաժեշտ դասագրքերով և ուսումնական պարագաներով: 2. Կազմակերպական և մեթոդական աշխատանք Ուսումնամեթոդական, ներադպրոցական և համադպրոցական աշխատանքները իրականացվել են սահմանված ժամկետներում և բարձր պատասխանատվությամբ: Ուսման որակի ապահովման նպատակով իրականացվել են հետևյալ միջոցառումները. • Առարկայական բովանդակության ուսումնասիրություն • Դասալսումների իրականացում • Տնօրինության կողմից գրավոր աշխատանքների կազմակերպում

Յ/հ	Ուսումնասիրության ոլորտ	Գնահատման արդյունք		Աշխատանքի նկարագիր
		թիվ	%	
1	2	3	4	5
				Մշտադիտարկումներ բոլոր դասարաններում Դասերը հագեցված են եղել ժամանակակից դիդակտիկ պարագաներով, կիրառվել են տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ: Լաբորատոր և գործնական աշխատանքները իրականացվել են սահմանված կարգի համաձայն: Ֆիզկուլտուրայի դասերը հիմնականում անցկացվել են բացօթյա տարածքներում և մարզասրահում՝ շեշտը դնելով անհատական վարժությունների և առողջ ապրելակերպի խթանման վրա: 3. Առաջին դասարանների ուսուցում Առաջին դասարանների ուսումնական գործընթացը կազմակերպվել է հաստատված ուսումնական պլանի պահանջներին համապատասխան: Նոր չափորոշիչների ներդրման շրջանակում մշտապես իրականացվել են դասալսումներ և ցուցաբերվել է մասնագիտական ու մեթոդական աջակցություն՝ թե՛ աշակերտներին, և թե՛ ուսուցիչներին: 4. Արժեհամակարգի ձևավորում և արտադարոցական գործունեություն Աշակերտների արժեհամակարգի ձևավորման և համակողմանի զարգացման նպատակով իրականացվել են բազմաբնույթ միջոցառումներ.

Յ/հ	Ուսումնասիրության ոլորտ	Գնահատման արդյունք		Աշխատանքի նկարագիր
		թիվ	%	
1	2	3	4	5
				- Հետազոտական և նախագծային աշխատանքներ - Խաղ-մրցույթներ և հրապարակային դասեր - Հայրենասիրական միջոցառումներ և դասաժամեր - Մշակութային կենտրոններ և թանգարաններ այցելություններ - Վարպետաց դասեր - Բանավեճի ակումբի հանդիպումներ - Ճանաչողական էքսկուրսիաներ Այս նախաձեռնությունները նպաստել են ոչ միայն գիտելիքների հարստացմանը, այլև ստեղծագործական կարողությունների, ինքնուրույն մտածողության և քաղաքացիական պատասխանատվության ձևավորմանը: Աշակերտներին տրամադրվել է աջակցություն նախագծային և հետազոտական աշխատանքների իրականացման ընթացքում, իսկ ուսուցիչներին՝ ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով: Տարվա ընթացքում իրականացված բոլոր աշխատանքները ծառայել են կրթական գործընթացի որակի բարձրացմանը, ուսուցիչների մասնագիտական զարգացմանը և աշակերտների գիտելիքների, հմտությունների ու արժեքային համակարգի հարստացմանը:
2	9-րդ և 12-րդ դաս.ավարտական պետական ավարտական քննություն-	28	64%	

Հ/հ	Ուսումնասիրության ոլորտ	Գնահատման արդյունք		Աշխատանքի նկարագիր
		թիվ	%	
1	2	3	4	5
	Ներից «18», «19» և «20» գնահատականներ ստացած շրջանավարտների թիվը և տոկոսը.			
3	Պետական ավարտական քննություններից անբավարար գնահատական ստացած շրջանավարտների թիվը և տոկոսը.	-	-	
4	Պետական միասնական քննություններին մասնակցած շրջանավարտների թիվը և տոկոսը.	10	56%	
5	Հայոց լեզվից բարձր («8», «9» և «10») տարեկան գնահատականներ ստացած սովորողների թիվը և տոկոսն ըստ հանրակրթական ծրագրերի աստիճանների՝	55	65%	4-րդ, 9-րդ, 12-րդ դասարանների (8-9-10) տարեկան գնահատականները
	IV դասարան	31	76%	
	IX դասարան	11	42%	
	XII դասարան	13	72%	
6	Հայոց լեզվից անբավարար («1», «2» և «3») տարեկան գնահատականներ ստացած սովորողների թիվը և տոկոսն ըստ հանրակրթական ծրագրերի աստիճանների՝	-	-	
	IV դասարան	-	-	
	IX դասարան	-	-	
	XII դասարան	-	-	
7	Մաթեմատիկայից բարձր («8», «9» և «10») տարեկան գնահատականներ ստացած սովորողների թիվը և տոկոսն ըստ հանրակրթական ծրագրերի աստիճանների՝	59	69%	
	IV դասարան	27	66%	
	IX դասարան	16	61%	
	XII դասարան	16	89%	
8	Մաթեմատիկայից անբավարար («1», «2» և «3») տարեկան գնահատականներ ստացած սովորողների թիվը և տոկոսն ըստ հանրակրթական ծրագրերի աստիճանների.	-	-	
	IV դասարան	-	-	
	IX դասարան	-	-	
	XII դասարան	-	-	
9	Հանրակրթական ծրագրերի երկրորդ աստիճանը ավարտած և ամփոփիչ ատեստավորման արդյունքում վկայական ստացած շրջանավարտների թիվը և տոկոսը:	26	100%	

Հ/հ	Ուսումնասիրության ոլորտ	Գնահատման արդյունք		Աշխատանքի նկարագիր
		թիվ	%	
1	2	3	4	5
10	«Գերազանցության» նշումով հիմնական կրթության վկայական ստացած շրջանավարտների թիվը և տոկոսը:	-	-	
11	Գերազանցության մեդալակիրների թիվը և տոկոսը:	-	-	
12	Հանրակրթական ծրագրերի երրորդ աստիճանը ավարտած և ամփոփիչ ատեստավորման արդյունքում ատեստատ ստացած շրջանավարտների թիվը և տոկոսը:	18	100%	
13	Հանրապետական, միջազգային, համաշխարհային օլիմպիադաներին մասնակցած և մրցանակներ, խրախուսանքներ ստացած սովորողների թիվը և տոկոսը:	-	-	
14	Համայնքային, մարզային, հանրապետական, միջազգային մրցույթներին, տարբեր միջոցառումներին սովորողների և ուսուցիչների ընդգրկվածությունը, մասնակիցների թիվը:	97	31%	Մասնակցություն ասմունքի, կերպարվեստի, երգ ու պարի փառատոներին, ռոբոտաշինության, շախմատի մրցումներին:
15	Սովորողների կողմից օրինակելի վարքագծի դրսևորումը, իրավախախտումներից զերծ մնալը:	315	100%	Ուսումնական տարվա ընթացքում սովորողները հետևողականորեն պահպանել են ներքին կարգապահական կանոնները՝ դպրոց ներկայանալով գրեթե առանց ուշացումների և դրսևորելով բարեհամբույր, հարգալից վերաբերմունք թե՛ ուսուցիչների, և թե՛ իրենց դասընկերների նկատմամբ: 2024-2025 ուսումնական տարում ուսուցիչների, աշակերտների և Աշակերտական խորհրդի անդամների համատեղ աշխատանքի արդյունքում կազմակերպվել է ներդպրոցական վերահսկողություն՝ կարգապահական և անվտանգության կանոնների պահպանման ուղղությամբ: Սովորողները ծանոթացվել են ճանապարհային երթևեկության կանոններին և տարհանման ընթացակարգերին, որի նպատակն է եղել նրանց անվտանգությունն ապահովելը և տարբեր իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու կարողությունների ձևավորումը:
16	Արտադասարանական աշխատանքներին մասնակցած սովորողների թիվը և տոկոսը, աշխատանքների արդյունավետությունը:	305	96%	Աշակերտները մասնակացել են շաբաթօրյակների, էքսկուրսիաների, սպորտային միջոցառումների, շախ-

Հ/հ	Ուսումնասիրության ոլորտ	Գնահատման արդյունք		Աշխատանքի նկարագիր
		թիվ	%	
1	2	3	4	5
				մատի մրցումների, այցելել են թանգարաններ, մշակութային օջախներ:
17	Արտադպրոցական կրթությանը մասնակցած սովորողների թիվը և տոկոսը:	215	68%	Չգալի թիվ են կազմում արտադպրոցական կրթություն ստացող աշակերտները, որոնք հաճախում են երգի, պարի, կերպարվեստի, սպորտային խմբակներ, երաժշտական դպրոցներ:
18	Առաջին դասարանցիների՝ ուսումնառությանը հարմարվածության մակարդակը.	40	100 %	Առաջին դասարանի աշակերտները ուսումնական տարվա առաջին իսկ շաբաթվա ընթացքում դրսևորել են բարձր հարմարվողականություն՝ արագ ինտեգրվելով դպրոցական միջավայրին, յուրացնելով ներքին կարգապահական կանոնները և ընդունելով իրենց Նոր՝ դպրոցականի սոցիալական կարգավիճակը: Սովորողները հետաքրքրված և ակտիվ մասնակցել են դասերին, ցուցաբերել առաջադիմություն և լիարժեք յուրացրել Նախատեսված ուսումնական նյութը::
19	Հանրակրթական ծրագրերի առաջին աստիճանից երկրորդ աստիճան փոխադրված (տեղափոխված) սովորողների առաջադիմությունը և Նոր կրթական աստիճանին նրանց հարմարվածության մակարդակը.	26	100%	Հանրակրթական ծրագրերի առաջին աստիճանից երկրորդ աստիճան փոխադրված բոլոր աշակերտները ցուցաբերել են բարձր առաջադիմություն, և փոխադրման արդյունքը կազմել է 100%: Նոր ուսումնական տարում ձևավորվել է դասարան, որտեղ սովորողները եկել են տարբեր կրթական հաստատություններից: Չնայած սկզբնական շրջանում առկա են եղել որոշ դժվարություններ՝ կապված Նոր միջավայրին հարմարվելու հետ, աշակերտները արագ հարմարվել են դպրոցական միջավայրին, ներքին կարգապահական կանոններին և դասարանական համագործակցությանը: Դասարանում ձևավորվել է բարենպաստ հոգեբանական մթնոլորտ, փոխադարձ հարգանք և թիմային ոգի, ինչը զգալիորեն նպաստել է ուսումնական առաջադիմությանը և դասարանական համախմբմանը: Այլ դպրոցներից տարբեր պատճառներով տեղափոխված աշակերտների նկատմամբ իրականացվել է բազմաբնույթ աշխատանք՝ թե հոգեբանական և թե

Հ/հ	Ուսումնասիրության ոլորտ	Գնահատման արդյունք		Աշխատանքի նկարագիր
		թիվ	%	
1	2	3	4	5
				կրթական միջավայրին ինտեգրվելու:
20	Հանրակրթական ծրագրերի երկրորդ աստիճանից երրորդ աստիճան փոխադրված (տեղափոխված) սովորողների առաջադիմությունը և նոր կրթական աստիճանին նրանց հարմարվածության մակարդակը.	17	100 %	2024-2025 ուստարում դպրոցի IX դասարանն ավարտել է 26 աշակերտ:
21	Սովորողների՝ առանձին առարկաների գծով ինքնուրույն կրթական ձեռքբերումները:	80	25 %	Դպրոցի մի շարք աշակերտներ մասնակցել են տարբեր մրցույթների և գրավել մրցանակային տեղեր:
22	Օլիմպիադաների, մրցույթների, ստեղծագործական հաշվետվությունների անցկացումը ուսումնական հաստատության կողմից:	70	22%	Դպրոցում՝ համաձայն հաստատված աշխատանքային պլանի, արդյունավետ կերպով կազմակերպվում և անցկացվում են առարկայական օլիմպիադաներ և խաղ-մրցույթներ: Նշված միջոցառումներին մասնակցության արդյունքների մասին հաշվետվություններ պատրաստվում են առարկայական մեթոդական հանձնախմբերի նախագահների և ուսումնական բաժնի պատասխանատուների կողմից, որոնք ներկայացվում են Նաև մեթոդական հանձնախմբերի և մանկավարժական խորհրդի նիստերին: Արդյունքները ընդգրկուն կերպով փոխանցվում են Նաև ծնողներին, ինչի շնորհիվ ապահովվում է տեղեկացվածություն և ակտիվ մասնակցություն կրթական գործընթացին: Հիմք ընդունելով ՀՀ ԿԳՄՍ Նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 12-ի 2343 Ա/2 հրամանը՝ 2024-2025 ուսումնական տարվա հանրապետական առարկայական օլիմպիադաների կազմակերպման և անցկացման ընթացակարգերը՝ դպրոցում հաջողությամբ անցկացվել են օլիմպիադաների դպրոցական և մարզային փուլերը: Ընդհանուր առմամբ օլիմպիադաներին մասնակցել է 50 աշակերտ՝ հայոց լեզվից, գրականությունից, անգլերենից, ռուսաց լեզվից, պատմությունից, մաթեմատիկայից և կենսաբանությունից: Իրականացվել է ընթերցանության մրցույթ: Մրցույթում հաղթող է ճանաչվել 6-րդ

Հ/հ	Ուսումնասիրության ոլորտ	Գնահատման արդյունք		Աշխատանքի նկարագիր
		թիվ	%	
1	2	3	4	5
				դասարանի աշակերտ Արթուր Պետրոսյանը, իսկ 5-6-րդ դասարաններից լավագույնս վեց աշակերտներ առաջին անգամ մասնակցել են նաև մայրենի լեզվով՝ ընթերցանության օլիմպիադային: Մարզային փուլ են անցել ռուսաց լեզվից 11-րդ դասարանի աշակերտ Գեղեցիկ Ջանիբեկյանը, կենսաբանություն առարկայից 10-րդ դասարանի աշակերտ Գրիգոր Ջանիբեկյանը, սակայն վերը նշված աշակերտները չեն անցել հաջորդ փուլ անցնել: Դպրոցում պարբերաբար կազմակերպվել են նաև առարկայական խաղ-մրցույթներ, վայելչագրության, ասմունքի և ընթերցանության մրցույթներ, որոնց ընթացքում աշակերտները ոչ միայն նոր գիտելիքներ են ձեռք բերել, այլև արժանացել խրախուսական պատվոգրերի: Դպրոցը ունի իր պաշտոնական կայքը, Ֆեյսբուքյան և Ինստագրամյան էջեր, որտեղ տարվա ընթացքում հրապարակվում են ինչպես պլանավորված, այնպես էլ իրականացված կրթական, մշակութային և հասարակական միջոցառումների վերաբերյալ տեղեկատվություններ: Այս հաղորդակցման արդյունավետ ձևաչափը նպաստում է թափանցիկության, հանրայնության և շահագրգիռ բոլոր կողմերի՝ աշակերտների, ծնողների և մանկավարժական անձնակազմի ակտիվ մասնակցությանը:
23	Հայրենագիտական ճամփորդությունների, արշավների, մշակութային օջախներ այցելությունների կազմակերպումը, հաճախականությունը:	315	100%	Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպվել են բազմաթիվ այցելություններ մշակութային, պատմամշակութային և բնապահպանական օջախներ, թանգարաններ, արվեստի կենտրոններ և գիտական հաստատություններ: Այս

Հ/հ	Ուսումնասիրության ոլորտ	Գնահատման արդյունք		Աշխատանքի նկարագիր
		թիվ	%	
1	2	3	4	5
				միջոցառումների նպատակը սովորողների մշակութային տեսլականի ընդլայնումն էր, ազգային և համամարդկային արժեքների ճանաչումը, ինչպես նաև ստեղծագործական և քննադատական մտածողության զարգացումը: Այցելություններ. Բնության և պատմամշակութային վայրեր • Խոսրովի անտառ – այցելություն «Աստղիկի» և «Վահագնի» ջրվեժներ • Գյումրի – պատմամշակութային վայրերի ուսումնասիրություն • Պանթեոն • Էջմիածնի Մայր տաճար • Օշական՝Սուրբ Մեսրոպ Մաշտոցի եկեղեցի • Գրական և կրթական հաստատություններ • Մատենադարան • Խնկո Ապրի գրադարան • Էդիթ Պրինտ հրատարակչություն Գրականության և մշակույթի մեծերի տուն-թանգարաններ • Ավետիք Իսահակյանի տուն-թանգարան (Երևան և Գյումրի) • Սիլվա Կապուտիկյանի տուն-թանգարան • Խաչատուր Աբովյանի տուն-թանգարան • Դերենիկ Դեմիրճյանի տուն-թանգարան • Վազգեն Սարգսյանի տուն-թանգարան • Եղիշե Չարենցի տուն-թանգարան • Չարենցի անվան արվեստի և գրականության թանգարան

Հ/հ	Ուսումնասիրության ոլորտ	Գնահատման արդյունք		Աշխատանքի նկարագիր
		թիվ	%	
1	2	3	4	5
				• Խաչատուր Աբովյանի տուն-թանգարան • Ալ.Սպենդիարյանի տուն-թանգարան Արվեստի և մշակույթի թանգարաններ • Ազգային պատկերասրահ • Սերգեյ Փարաջանովի տուն-թանգարան • Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարան • Ռուսական արվեստի թանգարան • Երվանդ Քոչարի թանգարան • Փայտարվեստի թանգարան • Կոմիտասի թանգարան • Գաֆեսճեան արվեստի կենտրոն: Թատրոններ, կինոթատրոններ և մշակութային կենտրոններ • Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն • Հր.Ղափլանյանի դրամատիկական թատրոն • Ստանիսլավսկու անվան դրամատիկական թատրոն • Armenian Helicopters – ճանաչողական այց • Մոսկվա կինոթատրոն Ռազմական և գիտական թանգարաններ • «Մայր Հայաստան» ռազմական թանգարան • Հայաստանի պատմության թանգարան • Ցեղասպանության թանգարան • Երկրաբանության թանգարան • Բնության թանգարան • Պլանետարիում • Կենդանաբանական այգի • Բուսաբանական այգի

Հ/հ	Ուսումնասիրության ոլորտ	Գնահատման արդյունք		Աշխատանքի նկարագիր
		թիվ	%	
1	2	3	4	5
				Կրթահամալիրի սաները ծանոթացել են գյուղատնտեսական աշխատանքի գործընթացին, մասնակցել են կարտոֆիլի բերքահավաքին:
24	Ներքին գնահատման հաշվետվության քննարկման արդյունքում ուսումնական հաստատության զարգացման ծրագրի լրամշակմանն ուղղված որոշումների կայացումը:			Մանկավարժական խորհրդի նիստերում կարևոր ուշադրություն է դարձվել կրտսեր, միջին և ավագ դպրոցների ուսուցիչների միջև համագործակցության խորացմանը: Ներկայացվել են նոր մոտեցումներ ու մեթոդներ, որոնք նպաստում են ուսուցողական գործընթացի բարելավմանը և աշակերտների ուսումնառության որակի բարձրացմանը: Այս համագործակցությունը հարթակ է ստեղծել փորձի փոխանակման և արդյունավետ աշխատանքային մեթոդների ներդրման համար, ինչը դրական անդրադարձ է ունեցել աշակերտների կրթական առաջադիմության վրա: Մասնավորապես, նկատելիորեն բարելավվել է առաջին աստիճանից երկրորդ աստիճանի, ինչպես նաև երկրորդից երրորդ աստիճանի ուսումնական անցման արդյունավետությունը: Առաջիկայում նախատեսվում է շարունակել այս համագործակցությունը՝ մեծ ուշադրություն դարձնելով նաև ուսուցիչների մասնագիտական զարգացմանն ու նորարարությունների կիրառմանը:

Յ/հ	Ուսումնասիրության ոլորտ	Գնահատման արդյունք		Աշխատանքի նկարագիր
		թիվ	%	
1	2	3	4	5
25	Սովորողների և ուսուցիչների առողջության պահպանումը, սննդի, հանգստի, աշխատանքի կազմակերպումը:			Դպրոցը մեծ նշանակություն է դարձնում ուսուցիչների աշխատանքային պայմանների բարելավմանը և նրանց հոգեբանական հանգստի կազմակերպմանը՝ որպես արդյունավետ կրթական միջավայրի կարևոր բաղադրիչ: Ստեղծվել են հարմարավետ և անվտանգ պայմաններ, որոնք ապահովում են ուսուցիչների բարձր պրոֆեսիոնալիզմն ու աշխատանքի որակը: Կազմակերպվում են մշակութային և կրթական այցեր թատրոններ, ցուցահանդեսներ և այլ մշակութային հաստատություններ, որոնք հնարավորություն են տալիս ուսուցիչներին մշտապես ընդլայնել իրենց գիտելիքների շրջանակը, մասնագիտական հորիզոնը և ամրապնդել թիմային ոգին: Դպրոցում գործում են բուժկետ, բուֆետ և ուսուցչանոց, իսկ դասասենյակները համալրված են ժամանակակից գույքով ու տեխնիկական միջոցներով, որոնք ստեղծում են աշխատանքային բարենպաստ միջավայր՝ նպաստելով ուսումնական գործընթացի արդյունավետությանը: Ուսուցիչները ակտիվորեն ներգրավված են սպորտային և առողջ ապրելակերպի խթանման միջոցառումներում: Պարբերաբար կազմակերպվում են մրցույթներ՝ վոլեյբոլի և բասկետբոլի տարբեր թիմերի միջև, որոնց մասնակցությամբ բարձրանում է ուսուցիչների և աշակերտների փոխհարաբերությունների որակը, և ստեղծվում է փոխադարձ հարգանքի ու թիմային միասնության մթնոլորտ:
26	Մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդների աշխատանքի արդյունավետությունը:	80	100%	Դպրոցում աշխատանքների կազմակերպմանը մասնակցել են նաև ծնողական և աշակերտական խորհուրդները. համագործակցության արդյունքում բարձրացել է դպրոցի աշխատանքի արդյունավետությունը:

Հ/հ	Ուսումնասիրության ոլորտ	Գնահատման արդյունք		Աշխատանքի նկարագիր
		թիվ	%	
1	2	3	4	5
				ԱԽ-ի նպատակն է. - Նպաստել համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորմանը - Չարգացնել հաստատությունում ժողովրդավարության, սովորողների ինքնակազմակերպման և ինքնակառավարման կարողությունները - Ամրապնդել, զարգացնել և պահպանել ազգային և համամարդկային արժեքները - Ներգրվել սովորողներին կրթահամալիրում կազմակերպվող արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներին, հասարակական աշխատանքներին: - Օժանդակել սովորողների իրավունքների և պարտականությունների լիարժեք գիտակցմանը և պաշտպանությանը: - Ստեղծել սովորողների ինքնադրսևորման, կարծիքի ազատ - արտահայտման համար բարենպաստ միջավայր: Կրթահամալիրի ԱԽ-ը իրականացրել է. ➤ Իրազեկումներ աշակերտների իրավասությունների և պարտականությունների վերաբերյալ: ➤ Ակտիվ մասնակցություն <<Գիտելիքի օր>> միջոցառման աշխատանքներին: ➤ <<Ուսուցչի տոնին>> նվիրված միջոցառման կազմակերպում: ➤ Ճանաչողական այց << Խորովի>> անտառ արգելոց: ➤ ԱԽ անդամների մասնակցություն «ՌՈԼԱՆ» մանկապատանեկան ֆիլմերի փառատոնին: ➤ ԱԽ նախագահ Գ. Ջանիբեկյանը, ԱԽ անդամներ Մ.Հարությունյան Մ.Սարգսյանը, Գ.Կիրակոսյանը և Գ.Ջանիբեկյանն աչքի են ընկել կամավորական աշխատանքները

Հ/հ	Ուսումնասիրության ոլորտ	Գնահատման արդյունք		Աշխատանքի նկարագիր
		թիվ	%	
1	2	3	4	5
				➤ Ախ մասնակցությունն հունգարաց ռեժիսորներՆանդոր Գրոշի և Էսթեր Մալնասի կազմակերպած աշխատարարին: ➤ Իրազեկում ազգային ուսուցողների վերաբերյալ. <<Դժվար.դրույնը ոչ միայն խոհանոցում>> կրթահամալիրի տարրական դասարաններում: ➤ Իրազեկում ազգային խոհանոցի վերաբերյալ. <<Թթուղրիկ>> կրթահամալիրի տարրական դասարաններում: ➤ Ախ-ի «Իմ սիրելի ուսուցիչ» համադարոցական քվեարկության կազմակերպում: ➤ Ախ-ի ակտիվ մասնակցությունն ամենամյա ամանորյա միջոցառման ծրագրին: ➤ Ախ անդամների ակտիվ մասնակցությունն սպորտային տարբեր միջոցառումներին: ➤ Բանավեճ- քննարկում «Վիրուսների աշխարհում. պայքար , խաղ, և սովորելու նոր ուղիներ» խորագրով: ➤ Բանավեճ-քննարկում <<Արիեստական բանականության դերը ժամանակակից կրթության մեջ>> խորագրով: ➤ Բանավեճ-քննարկում <<Մահա պատիժն արդարացված է >> թեմայով: ➤ Ախ անդամների ակտիվ մասնակցությունն դպրոցում հայտարարված «Թումանյանական շաբաթ»-ին: Հ.Թումանյանի հեքիաթների ընթերցումներ և նույն հեքիաթների մոտիվների հիման վրա մուլտֆիլմերի դիտումներ և քննարկումներ կրթահամալիրի մանկապարտեզում և տարրական դպրոցում : ➤ Բարեկենդանի տոնի միջոցառման ակտիվ մասնակցությունն թափոններից տիկնիկների և դիմակների պատրաստում տարրական դասարաններում, ավագ դասարաններում ուսուցողների պատրաստում և

Հ/հ	Ուսումնասիրության ոլորտ	Գնահատման արդյունք		Աշխատանքի նկարագիր
		թիվ	%	
1	2	3	4	5
				խաղ վիկտորիանների կազմակերպում: ➤ Մասնակցել է Բնագիտական փառատոն համադպրոցական գիտաժողովի. <<Հայաստանի ջրային մարտահրավերներ>> նախագծային աշխատանքով և արժանացել է <Արդիական նախագիծ>> անվանակարգին: ➤ ԿԳՄՍՆ-ի կողմից առաջարկված ազգային փոքրամասնությունների տոների իրազեկմանը. Խըղըր Նաբի տոնը եզդիների մոտ: ➤ Կազմակերպել է «Սովորում ենք բնության գրկում» ծրագրի դասընթացներին ➤ Ներդպրոցական ասմունքի մրցույթի կազմակերպման ակտիվ մասնակցություն ➤ Ներդպրոցական շախմատի մրցույթի մասնակցություն և խաղ վարկանիշային շախմատիստ Ա.Մկրտչյանի հետ ➤ Հասարակական աշխատանքների կազմակերպում.թղթի թափոնի հավաքագրում ➤ <<Ճանաչենք հայկականը>> այցերի կազմակերպում թանգարաններ և պատմամշակութային կենտրոններ ➤ Ուսոցողական այց <<Չինվորի տուն>> հկ ➤ «Մասնագիտական կողմնորոշում» ծրագրի շրջանակներում տարբեր ոլորտի մասնագետների հետ հանդիպումների կազմակերպում ➤ Ախ ակտիվ մասնակցություն տարիանման գործընթացի կազմակերպմանը «Անձնակազմի և աշակերտների պատուպար-ման կազմակերպումը հակառակորդի օդուժի հարձակման դեպքում» ➤ Ախ ակտիվ մասնակցություն տարիանման գործընթացի կազմակերպմանը.«Անձնակազմի, աշակերտների , մանկապարտեզի սաների պաշտպանության

Հ/հ	Ուսումնասիրության ոլորտ	Գնահատման արդյունք		Աշխատանքի նկարագիր
		թիվ	%	
1	2	3	4	5
				կազմակերպումը երկրաշարժի դեպքում» : ➤ Թանգարանների միջազգային օրվան ընդառաջ այցեր տարբեր թանգարաններ: ➤ Սեմինար պարապմունքների կազմակերպում ուսուցիչների համար թվային տեխնոլոգիաների ճշգրիտ և արագ կիրառման դասընթացներով ➤ Թեմատիկ տարբեր միջոցառումներին ԱԽ անդամների ակտիվ մասնակցություն:
27	Ուսուցիչների մասնագիտական պատրաստվածությունը, կրթության որակի ապահովմանն ուղղված նրանց նորարարական գործունեությունը.:	32	100%	Ուսուցիչներն ունեն մասնագիտական համապատասխան պատրաստվածություն. դասերին օգտագործվում են ժամանակակից տեխնոլոգիաներ: Ուսուցիչները հանդես են գալիս հողվածներով, սեմինարներով, մանկավարժական ընթերցումներով: Ուսումնական տարվա ընթացքում ուսուցիչները ակտիվորեն մասնակցել են բազմաթիվ վերապատրաստումների և դասընթացների, որոնք նպատակ են ունեցել բարելավելու նրանց մասնագիտական կարողությունները և հարմարվելու ժամանակակից ուսուցման մեթոդներին: «Positive Room» հոգեբանական կենտրոնի կազմակերպած սեմինարներում մեր մանկավարժները ծանոթացել են աշխատանքային տեխնիկաներին, որոնք կիրառվում են ուշադրության պակաս և հիպերակտիվություն ունեցող երեխաների հետ, ինչպես նաև մանկական մտավոր զարգացմանը նպաստող խաղերի միջոցով՝ զարգացնելու աշակերտների մտածողությունը, ուշադրությունն ու հիշողությունը: Անգլերենի ոլորտում ուսուցիչները մասնակցել են ITTI - Armenia School of English-ի կողմից անցկացված դասընթացներին, որտեղ ընդգրկվել

Հ/հ	Ուսումնասիրության ոլորտ	Գնահատման արդյունք		Աշխատանքի նկարագիր
		թիվ	%	
1	2	3	4	5
				են ձևաբանության, քերականության, բառագիտության և շարահյուսության թեմաները: Բրիտանական խորհուրդի (British Council) կողմից կազմակերպված դասընթացները օգնել են ուսուցիչներին արդյունավետ ձևով դասավանդել տարրական օղակի աշակերտներին՝ կիրառելով արդիական մեթոդներ: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (CPC Armenia) հետ համատեղ իրականացվել են վերապատրաստումներ՝ ընդգծելով մանկավարժների և ծնողների դերը կոռուպցիայի դեմ պայքարում, ինչը նպաստում է դպրոցի սոցիալական և բարոյական միջավայրի բարելավմանը: Առողջ ապրելակերպի դասընթացները ևս ընդգրկվել են ուսուցիչների վերապատրաստման ծրագրերում՝ նպաստելով համառոտ գիտելիքների և հմտությունների ձևավորմանը՝ աշակերտների ֆիզիկական և հոգեկան առողջության ապահովման համար: Ռուսաստանի Դաշնության Արմավիրի պետական մանկավարժական համալսարանի կողմից կազմակերպված դասընթացը ուղղված էր ժամանակակից լեզվական ինտեգրատիվ տեխնոլոգիաների կիրառմանը ռուսաց լեզվի՝ որպես օտար լեզվի դասավանդման ոլորտում Հայաստանում, ինչը մեծապես բարելավեց ուսուցման որակը: Աշակերտների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ իրականացվող աշխատանքներում ուսուցիչները ներգրավվել են «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության

Հ/հ	Ուսումնասիրության ոլորտ	Գնահատման արդյունք		Աշխատանքի նկարագիր
		թիվ	%	
1	2	3	4	5
				համատեղ իրականացված վերապատրաստումներում՝ ստանալով նոր գիտելիքներ և հմտություններ՝ որակյալ աջակցության համար: Այս բոլոր վերապատրաստումներն ու դասընթացները նպաստել են մեր ուսուցիչների մասնագիտական զարգացմանը, բարձրացրել նրանց արդյունավետությունն ու նորարարական մոտեցումները՝ նպաստելով դպրոցի կրթական մակարդակի բարձրացմանը:
28	Ուսուցիչների մասնակցությունը «Տարվա լավագույն ուսուցիչ» կամ այլ մրցույթների:	-	-	
29	Որակավորման տարակարգ ունեցող, կամավոր ատեստավորված ուսուցիչների թիվը և տոկոսը:	2	6%	Մանկավարժներին առաջարկվել է քայլեր ձեռնարկել ատեստավորման նպատակով:
30	Ուսուցման նպաստավոր պայմանները, նյութատեխնիկական, ուսումնամեթոդական ապահովվածությունը:			Դպրոցը ապահովում է ժամանակակից և բարեկարգ նյութատեխնիկական բազա, որը ստեղծում է արդյունավետ և հարմարավետ ուսումնական միջավայր աշակերտների և ուսուցիչների համար: Տարրական դասարանների դասասենյակները գտնվում են դպրոցի առաջին հարկում՝ ապահովելով անվտանգ և ուսումնական գործընթացին բարենպաստ պայմաններ: Դասասենյակներում տեղադրված են ոչ կավճային, մարկերով գրելու հնարավորությամբ գրատախտակներ և պրոյեկտորներ, ինչը նպաստում է ինտերակտիվ և ժամանակակից դիդակտիկ մեթոդների կիրառմանը: Համակարգչային դասասենյակում ապահովված են աշակերտների թվով ժամանակակից համակարգիչներ՝ ինֆորմատիկայի արդյունավետ ուսուցման համար: Դպրոցում գործում են վերանորոգված և ժամանակակից կահավորված լաբորատորիաներ՝ նվիրված քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության և աշխարհագրության առարկաների դասավանդմանը: Ստեղծվել են նաև հատուկ տեխնոլոգիայի և

Հ/հ	Ուսումնասիրության ոլորտ	Գնահատման արդյունք		Աշխատանքի նկարագիր
		թիվ	%	
1	2	3	4	5
				Նկարչության արվեստանոցի պայմաններ, որտեղ աշակերտները զարգացնում են ստեղծագործական կարողություններն ու հմտությունները: Մարզադահլիճը հագեցած է անհրաժեշտ սարքավորումներով և կահույքով, ապահովվելով ֆիզիկական կրթության և առողջ ապրելակերպի խթանումը: Այս նյութատեխնիկական բազան հիմք է հանդիսանում դպրոցի ուսումնական գործընթացի որակի բարձրացման և աշակերտների համակողմանի զարգացման համար:
31	Ուսումնականության միջավայրի անվտանգության ապահովումը:			Դպրոցում անվտանգության համար պատասխանատու են օրվա հերթապահ ուսուցիչները: Աշակերտները նախապես ծանոթանում են լաբորատորիաների և արհեստանոցների տեխնիկայի կիրառման անվտանգության կանոններին, որոնք փակցված են բոլոր լաբորատորիաներում:
32	Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների առկայությունը և կիրառման արդյունավետությունը:			Դպրոցն ապահովված է ՏՀՏ միջոցներով. դասերը հիմնականում անցկացվում են ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ:
33	Ձեռնարկատիրական գործունեության, լրացուցիչ կրթական ծառայությունների առկայությունը, դրանց արդյունավետությունը:			Դասերից հետո գործում են կերպար-վեստի, պարի, կարատեի, ռոբոտաշինության, ծրագրավորման խմբակներ:
34	Բյուջետային ֆինանսավորման և ծախսերի արդյունավետության վերլուծությունը:			
35	Ուսումնական հաստատության կառավարման և ֆինանսավորման հարցերում համայնքի ներկայացուցիչներին ներգրավելը:	-	-	Դպրոցի ֆինանսական գործունեությանը որևէ այլ կառույց չի մասնակցել: Հիմնական ծախսերը կատարվել են աշակերտների ուսման վճարների և հիմնադիրների ներդրումներից:
36	Ուսումնադաստիարակչական գործընթացում աշակերտակենտրոն մոտեցման ապահովումը՝ ուսուցման ավանդական և արդիական մեթոդների ներդաշնակ համադրմամբ:			Այս ուղղությամբ ուսուցիչների համար հաճախակի են անցկացվել սեմինար-գործ. պարապմունքներ՝ արդիական մեթոդների տեղայնացման, կիրառման նպատակով: Աշակերտակենտրոն ուսուցումը լավագույնս

Հ/հ	Ուսումնասիրության ոլորտ	Գնահատման արդյունք		Աշխատանքի նկարագիր
		թիվ	%	
1	2	3	4	5
				իրականացվում է ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ:
37	Ուսուցման նպատակաուղղվածությունը շրջանավարտի պահանջների բավարարմանը՝ ինչպես մասնագիտական կողմնորոշման, աշխատանքի անցնելու, այնպես էլ կրթությունը շարունակելու առումով:			2024-2025 ուսումնական տարում 8-12-րդ դասարաններում շարունակվել են մասնագիտական կողմնորոշման դասերը, որոնք ներառել են դաս-բանավեճեր, ճանաչողական հանդիպումներ և «Էքսկուրս մասնագիտությունների աշխարհում» շարքի միջոցառումներ: Դասընթացների նպատակն էր աջակցել սովորողներին մասնագիտության ընտրության հարցում և նախապատրաստել նրանց ապագա աշխատանքային գործունեությանը: Դաս-բանավեճեր • «Արհեստական բանականության դերը կրթության մեջ» • «Մահապատիժն արդարացված է» • «Ձմեռ պապի հեքիաթը» Հանդիպումներ մասնագիտական կողմնորոշման նպատակով Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպվել են մի շարք հանդիպումներ տարբեր ոլորտների մասնագետների և կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Դրանք նպաստել են սովորողների մասնագիտական հետաքրքրությունների ձևավորմանը և աշխատաշուկայի պահանջներին ծանոթանալուն: 1. LLC International University – համալսարանի ներկայացուցիչների հետ ճանաչողական հանդիպում 2. Ռուան մանկապատանեկան ֆիլմերի փառատոն – գրույց Նանդոր Գրոշի հետ

Հ/հ	Ուսումնասիրության ոլորտ	Գնահատման արդյունք		Աշխատանքի նկարագիր
		թիվ	%	
1	2	3	4	5
				3. Լրագրություն – հանդիպում լրագրող Գոհար Սավադյանի հետ 4. American Virtual Academy – ավագ դպրոցի սովորողների համար ներկայացում կրթական հնարավորությունների մասին 5. ՀՀ Արդարադատության ակադեմիա – հանդիպում պրոռեկտոր Մարգարիտ Ամյանի հետ 6. Չբոսաշրջություն և տուրիզմ – զրույց պատմաբան, ներգնա տուրերի մասնագետ, զբոսավար Շուշան Համբարձումյանի հետ 7. Իրավապահ համակարգ – հանդիպում Շենգավիթի քննչական կոմիտեի քննիչ Գևորգ Խաչատրյանի հետ 8. Գործարար համագործակցություն – համագործակցություն Tapon.am հարթակի հետ 9. Ստեղծագործական ոլորտ – հանդիպում «Արմքոմեդի» հաղորդաշարի համահեղինակ և սցենարիստ Նարեկ Մարգարյանի հետ, որը լի էր ոգեշնչմամբ, բաց զրույցներով և կարևոր մասնագիտական խորհուրդներով
38	Կրթական բարենպաստ միջավայրի ստեղծմանը սովորողների գործունե մասնակցության առկայությունը, նրանց ներգրավվածությունը դպրոցի բարեկարգման և կանաչապատման աշխատանքներին:	315	100%	Աշակերտները մշտապես ներգրավվել են շաբաթօրյակներին, ծառատունկերին, կանաչապատման աշխատանքներին:
39	Դպրոցահասակ երեխաներին ուսումնառության մեջ ընդգրկելու, նրանց վերաբերյալ տեղեկատվություն հավաքելու, մշակելու աշխատանքների իրականացումը:			Ետ մնացած աշակերտների ուսումնական գործընթացում արդյունավետ ընդգրկումը կազմակերպվել է դպրոցի տնօրենի, փոխտնօրենների, դասավանդող ուսուցիչների, դասղեկների և ծնողների համատեղ ջանքերով: Կատարվել են համակարգված աշխատանքներ՝ նպաստելով անհատական մոտեցման կիրառմանը և ուսումնական դժվարությունների հաղթահարմանը:


Հ/հ	Ուսումնասիրության ոլորտ	Գնահատման արդյունք		Աշխատանքի նկարագիր
		թիվ	%	
1	2	3	4	5
				Բացի այդ, լավ սովորող աշակերտների կողմից իրականացվել են կամավորական աշխատանքներ, որոնք նպաստել են իրենց հասակակիցների առաջադիմությանը և ուսումնական միջավայրի հարստացմանը:
40	Սեռային (գենդերային) հավասարության ապահովմանը և համայնքում ապրող սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների՝ կրթությունից դուրս չմնալուն ուղղված ջանքերի դրսևորումը:			Դպրոցում ԱԽ կազմում աշակերտները ընտրվել են սեռային հավասարությամբ: Չկան կրթվել չցանկացող աշակերտներ:
41	Դպրոցական տարիքի յուրաքանչյուր երեխայի համար՝ անկախ նրա ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, սոցիալական ծագումից, ուսումնական հաստատության մատչելի և հասանելի լինելը:			Դպրոցում ստեղծվել են բոլոր անհրաժեշտ և բավարար պայմանները: Այլազգի աշակերտների համար չկա որևէ խտրականություն: Զրույցներ են վարվել բուլինգի թեմաներով:
42	Կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջներին ուսումնական հաստատության կանոնադրության համապատասխանությունը:			Ուսումնական հաստատության կանոնադրությունը համապատասխանում է կրթության բնագավառը կարգավորող օրենսդրական պահանջներին:
43	Պետական ուսումնական հաստատությանը անհատույց օգտագործման իրավունքով հանձնված շենքերի (գույքի) խնամքով շահագործումը և պահպանումը:			Դպրոցը վարձակալել է Սիամանթոյի անվան թիվ 162 հիմնական դպրոցի տարածքը, որը օգտագործվել է խնամքով, հիմնադիրների կողմից կատարվել են վերանորոգումներ, թարմացվել է գույքը:
44	Ուսումնական հաստատության ներքին կարգապահական կանոնների առկայությունը, սահմանված վարքագծի կանոնների պահանջների կատարումը (աշխատողներ և սովորողներ):			Դպրոցում գործում են ներքին կարգապահական կանոններ, որի պահանջների կատարմանը հետևում են ուսուցչական և աշակերտական համակազմերը:
45	Կիրառված կարգապահական տույժերը և խրախուսանքները, դրանց հիմնավորվածությունը:			Ուսման մեջ բարձր առաջադիմության, ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումներին և դպրոցում իրականացվող այլ կամավորական աշխատանքների ակտիվ մասնակցության համար մի շարք աշակերտներ ստացել են գովասանագրեր, շնորհակալագրեր և պատվոգրեր: Կարգապահական տույժի ներկայացված աշակերտներ չենք ունեցել:
46	Ուսուցիչների աշխատանքի ընդունման, աշխատանքից ազատման, կենսաթոշակների նշանակման գործընթացի օրինականությունը:			Նշված աշխատանքները իրականացվել են ՀՀ Աշխատանքային օրենսգրքի դրույթներին համապատասխան:

Հ/հ	Ուսումնասիրության ոլորտ	Գնահատման արդյունք		Աշխատանքի նկարագիր
		թիվ	%	
1	2	3	4	5
47	Հանրակրթության բնագավառը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարումը:			Հայաստանի Հանրապետության՝ հանրակրթության բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները կատարվում և վերահսկվում են:
48	Ուսումնական հաստատությունում վերջին երեք տարիներին իրականացված ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքները:			Կատարված վերահսկողությունը ցույց է տվել, որ դպրոցի ողջ անձնակազմը աշխատել է ըստ նախատեսված ծրագրերի, կատարվել են վարչական և ուսումնադաստիարակչական նախատեսված աշխատանքները, առկա են անհրաժեշտ փաստաթղթերը:
49	Ուսումնական հաստատությանը տրված հանձնարարականների կատարողականների առկայությունը:			Ուսումնական տարվա ընթացքում ԿԳՄՍ նախարարության կողմից դպրոցին տրված հանձնարարականները (արտադպրոցական և ներդպրոցական միջոցառումների, մրցույթների անցկացման մասին) կատարվել են նախատեսված ժամկետներում:
50	Ուսումնական հաստատությունում պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերի առկայությունը, դրանց վարման կարգերի պահպանումը:			Առկա են պարտադիր գործածության բոլոր փաստաթղթերը, պահպանվում է դրանց վարման կարգը:


Աղյուսակ 1. Դասարանների թիվը՝ ընթացիկ և նախորդ երկու ուստարիների համար

	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի	2024-2025 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
1-ին դասարան	2	2	2	անփոփոխ
2-րդ դասարան	2	2	2	անփոփոխ
3-րդ դասարան	1	2	2	անփոփոխ
4-րդ դասարան	1	1	2	աճ
5-րդ դասարան	1	1	2	աճ
6-րդ դասարան	1	1	1	անփոփոխ
7-րդ դասարան	1	1	1	անփոփոխ
8-րդ դասարան	1	1	1	անփոփոխ
9-րդ դասարան	1	1	2	աճ
10-րդ դասարան	2	1	1	անփոփոխ
11-րդ դասարան	2	2	1	նվազում
12-րդ դասարան	2	2	2	անփոփոխ
ընդամենը	17	17	19	Աճ

2022-2023 ուստարի




2023-2024 ուստարի



2024-2025 ուստարի







Աղյուսակ 2. Ըստ դասարանների՝ սովորողների թիվը ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

Դասարանների թիվը	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի	2024-2025 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
1-ին դասարան	41	33	40	աճ
2-րդ դասարան	40	42	33	նվազում
3-րդ դասարան	20	40	41	աճ
4-րդ դասարան	15	26	41	աճ
5-րդ դասարան	17	21	26	աճ
6-րդ դասարան	21	19	20	աճ
7-րդ դասարան	23	20	19	նվազում
8-րդ դասարան	14	28	20	նվազում
9-րդ դասարան	20	14	26	աճ
10-րդ դասարան	20	20	17	նվազում
11-րդ դասարան	13	18	13	նվազում
12-րդ դասարան	18	13	18	աճ
ընդամենը	262	294	315	աճ


2022-2023 ռևյու




2023-2024 ռևյու



2024-2025 ռևյու





Աղյուսակ 3. Ընդհանուր տվյալներ սովորողների վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

Ցուցանիշ	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի	2024-2025 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա սկզբին՝ տվյալ ուստարվա սեպտեմբերի 14-ի դրությամբ:	256	284	318	աճ
Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա վերջին՝ տվյալ ուս- տարվա հունիսի 9-ի դրությամբ:	262	294	315	աճ
Ուսումնական տարվա ընթացքում ընդունված սովորողների թիվը	18	24	17	նվազում
Ուսումնական տարվա ընթացքում հեռացած սովորողների թիվը	12	14	20	աճ

Աղյուսակ 4. Ընդհանուր տվյալներ ուսուցիչների վերաբերյալ՝
ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար


Ցուցանիշ	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի	2024-2025 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Ուսուցիչների ընդհանուր թիվը	31	35	38	աճ
Ուսուցիչների միջին շաբաթական բեռնվածությունը կամ դրույքաչափը	22	22	22	հաստատուն

Աղյուսակ 5. Տվյալներ ուսուցիչների տարիքային բաշխվածության վերաբերյալ՝
ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար-



	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի	2024-2025 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Մինչև 30 տարեկան	9	9	9	նվազում
31-40 տարեկան	9	7	11	աճ
41-50 տարեկան	7	10	10	անփոփոխ
51-55 տարեկան	1	1	3	աճ
56 տարեկան և ավելի	5	8	5	նվազում



2023-2024 ուստարի



2024-2025 ուստարի



**Աղյուսակ 6 . Տվյալներ ուսումնական հաստատության
ղեկավար և վարչական կազմի վերաբերյալ**

Պաշտոնը	Անունը, ազգանունը, հայրանունը	Տվյալ պաշտոնում աշխատելու ժամանակահատվածը	Տվյալ հաստատությունում աշխատելու ժամանակահատվածը	Պետական պարգևները, կոչումները և այլն
Տնօրեն	Աննա Համլետի Ստեփանյան	5տ	17 տ	մանկ.գիտությունների թեկնածու
Տնօրենի տեղակալ ուսումնական գծով	Քրիստինե Կարմենի Ավագյան	5տ	11 տ	
Տնօրենի տեղակալ ուսումնական գծով	Կարինե Համլետի Դուրգարյան	3տ.6 ամիս	3տ.6 ամիս	

Դպրոցի տնօրենությունը ներկայացնում է փորձառու և բարձր մասնագիտական գիտելիքներով օժտված կուռ թիմ, որը միասնաբար ու համակարգված գործում է դպրոցի ողջ գործունեության կազմակերպման և արդյունավետ կառավարման նպատակով: Մանկավարժական համակազմը, հիմնվելով թիմային աշխատանքի սկզբունքների վրա, ակտիվորեն համագործակցում է փոխգործակցության և փոխըմբռնման մթնոլորտում՝ նպաստելով կրթական գործընթացի բարձր մակարդակի ապահովմանը:

Տնօրենության պատասխանատվությունն է վերահսկել դպրոցի ընթացիկ աշխատանքներն ու ռազմավարական որոշումները, ինչպես նաև ապահովել դրանց ժամանակին և որակյալ իրականացումը: Դպրոցի ղեկավարությունն աշխատում է սերտ համագործակցությամբ ուսուցիչների, դասղեկների, ծնողների և այլ շահագրգիռ կողմերի հետ՝ համակարգելով և միավորելով բոլոր կրթական գործընթացները և ծրագրերը:

Այս բազմակողմանի և համատեղ մոտեցումը հնարավորություն է տալիս ստեղծել բարենպաստ ուսումնական միջավայր, որտեղ հնարավոր է հասնել ուսումնական գերազանցության և ապահովել աշակերտների համապարփակ զարգացման համար անհրաժեշտ բոլոր պայմանները: Բոլոր մասնակցող կողմերի ակտիվ ներգրավվածությունն ու պատասխանատու մոտեցումը հանդիսանում են դպրոցի կայուն և հաջողակ գործունեության առանցքային հիմքը:

Մաս 2. Ուսումնական հաստատության սովորողների և աշխատակազմի անվտանգ կենսագործունեությունը և առողջության պահպանումը

«Երևակ» կրթահամալիրում բարձր հիմքերի վրա են դրված աշակերտների, ուսուցիչների և դպրոցի ողջ անձնակազմի առողջության պահպանման և ֆիզիկական ներդաշնակ զարգացման խնդիրները: Դպրոցը իր առջև խնդիր է դրել իրականացնել անվտանգ ուսումնական գործընթացը, աշակերտների հոգևոր ֆիզիկական և սոցիալական բարեկեցության ապահովումն ու զարգացումը: Դպրոցում և նրա շրջակայքում ստեղծված են անվտանգ միջավայր և անվտանգ պայմաններ աշակերտների, ուսուցիչների, վարչական և սպասարկող անձնակազմերի աշխատանքի, կյանքի և առողջության պահպանման համար:

2.1 Ուսումնական հաստատությունը պահպանում է շենքի և տարածքի անվտանգ շահագործում:

1. Դպրոցի տարածքը ցանկապատված է և անվտանգ աշակերտների ազատ տեղաշարժման համար: Կա դպրոցի մուտքերի, բակի տեսահսկման համակարգ: Դպրոցի մուտքի մոտ առկա է անցակետ, և յուրաքանչյուր անձ ներս է մտնում անցագրով: Դասերի ընթացքում սահմանված է հերթապահություն:

2. Դպրոցն ունի միջմասնաշենքային տարածքներ, որոնք հեռացված են ավտոճանապարհային գոտուց և արդյունաբերական օբյեկտներից: Առավոտյան՝ ժամը 8.00-8.15, դպրոցի աշխատակիցները վերահսկում են աշակերտների մուտքը դպրոց:

3. Դպրոցն ունի բացվող մեծ դարպաս, և արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ հաստատության շենքին (հիմք՝ դպրոցի պլան-հատակագիծը):

4. Դպրոցի տարածքը մաքուր է: Աղբահանությունը կատարվում է տարանջատված: Աշակերտները աղբը թափում են հատուկ նշումով տարբերակված աղբարկղերում: Լաբորատորիայում վտանգավոր նյութեր չեն օգտագործվում, իսկ օգտագործվող այրվող և այլ նյութերի թափոնները կանոնավորապես հավաքվում են աղբարկղերում և դուրս բերվում դպրոցի տարածքից:

5. Պարբերաբար իրականացվում են միջոցառումներ կրծողների դեմ:

2.2. Անվտանգության նորմերի և առողջության պահպանման ծառայությունների կազմակերպում:

Դպրոցում

Առկա են	Առկա չեն
• դեպի դուրս բացվող ելուստային ելքեր	• ոչ կառուցվածքային վտանգներ
• կապի և արտակարգ իրավիճակների ազդարարաման համակարգ	• անիվներով տեղաշարժվող ծանր իրեր
• կրակմարիչներ	• կահույքի վրա տեղադրված ծաղկամաններ, նկարներ և ծանր իրեր
• համակարգչային սարքավորումներ, պրոյեկտորներ՝ ամուր տեղադրված և ամրացված աշխատատեղերին	• դպրոցական միջանցքների սայթաքուն հատակներ
• տարհանման պլան	
• նախապրահում, մասնաշենքերի նախամուտքերում փակցված տարհանման սխեմաներ՝ համապատասխան գունային սլաքներով	
• ամուր, բարվոք վիճակում, անվտանգ կենսագործունեության պահանջներին համապատասխան դպրոցական կահույք, ամրացված պահարաններ	

2.3. Ուսումնական հաստատության նախագծային հզորությանը նկարագրող ցուցանիշներ և չափանիշներ

Դպրոցի դասասենյակներում նստարանների թիվը և դրանց միջև հեռավորությունը մասամբ համապատասխանում է առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերին (2մ²):

Աղյուսակ 7. Տվյալներ դասասենյակում սեղան-նստարանների դասավորվածության և թվի վերաբերյալ.

